«Ազգ» Azg

22 ՆՈՅԵՄԲԵՐ 2013 ՈՒՐԲԱԹ 203(5286)

ISSN: 1829-1651

# Ծնկեց նաեւ Ուկրաինան... Վիլնյուսյան նավակում մնացին Մոլդովան ու Վրաստանը

## *Ուկրաինան կասեցրեց Ասոցիացման համաձայնագրի բանակցությունները, որ ակտիվանա ԱՊՀ երկրների ուղղությամբ*

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ուկրաինացի օրենսդիրները երեկ ձախողեցին ընդունելու օրինագիծը, որ թույլ կտար ազատազրկված Յուլյա Տիմոշենկոյին բժշկական օգնություն ստանալ արտերկրում: Որ նման օրինագիծը չընդունվեց, ուկրաինական իրավագիտական մտքի ու պրակտիկայի առումով ողբերգություն չէ, սակայն ողջ խնդիրն այն է, որ փաստացի այս ձախողմամբ Ուկրաինան ստեղծեց մի իրավիճակ, երբ Ասոցիացման համաձայնագրի ակնկալվող ստորագրումը Վիլնյուսում անհնար է, քանի որ այս 6 օրինագծերը, որոնք դատախազության վերաբերյալ օրենքներում փոփոխությունների միջոցով հնարավոր կդարձնեն Տիմոշենկոյի՝ արտերկրում բուժվելը: Նշենք, որ գլխավոր պահանջ հանդիսացող օրինագծերի մեկ այլ փաթեթ, որ վերաբերում էր ընտրությունների անցկացմանն առնչվող օրենսդրությանը, Ռադան հաջողեցրել էր ընդունել:

Սակայն ինչպես ուկրաինական մասշտաբները, այնպես էլ առկա տրամադրությունները որեւէ պարագայում լավատեսական ենթադրությունների հիմք չէին տալիս, ընդ-




օրինագծի ընդունումը ԵՄ-ի պահանջներից մեկն էր:

Տեսականորեն դեռեւս հնարավոր կլիներ շտկել իրավիճակը, քանի որ ուկրաինական խորհրդարանը արտահերթ նիստ կարող էր գումարել այսօր կամ հաջորդ շաբաթվա սկզբում ու փորձեր բավարարել ԵՄ-ի առաջ քաշած պայմանները, այսինքն՝ ընդուներ հակառակը, վկայում էին այդ հավանականության առավելագույնս չնչին լինելու մասին, հատկապես երբ երկրի բարձրագույն իշխանությունը Ասոցիացման համաձայնագրի ստորագրումն իր տրամաբանական ավարտին հասցնելու հարցում մեծ պատրաստակամություն չէր դրսեւորել ու չէր դրսեւորում:

*Տես էջ 8*

# Պարտադիր կուտակային համակարգ՝ դժգոհություններ եւ փաստարկներ




ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ի՞նչ են պահանջում կենսաթոշակային նոր համակարգի եւ մասնավորապես նրա հիմնական՝ պարտադիր կուտակային բաղադրիչի դեմ բողոքողները: Նրանց դժգոհության հիմնական պատճառը իրենց աշխատավարձից իրենց իսկ ապագա կենսաթոշակի համար պահվող 5 տոկոսն է, ինչը նրանք համարում են որպես իրենց եկամտի կրճատում այդ չափով: Տրամաբանությունը մոտավորապես սա է. «Ի՞նչ իմանանք՝ 20-30 տարի հետո ինչ կլինի, թողեք իմ աշխատավարձն ամբողջությամբ ինձ»: Ընդ որում, կուտակային համակարգի դեմ բողոքողներն այնքան էլ չեն ցանկանում լսել, որ կառավարությունն իր կողմից հատկացնում է նույն չափի գումար մինչեւ 500 հազար աշխատավարձերի դեպքում, ինչի արդյունքում այդ մարդկանց ընդհանուր եկամտի 10 տոկոսի չափով, ամեն ամիս գումար է հավաքվում նրանց ապագա կենսաթոշակի համար: Այստեղ ճշգրտենք՝ 500 հազար դրամից ավելի աշխատավարձ ստացողների դեպքում պետության համաֆինանսավորումը չի գերազանցում 25 հազար դրամը:

Անդրադառնանք եկող տարվա հունվարից սկսած նոր համակարգում ընդգրկվող մինչեւ 40 տարեկան անձանց դժգոհող մասի հիմնական պահանջին՝ չենք ցանկանում տալ մեր եկամտի 5 տոկոսը:

Առաջին եւ հիմնական հակափաստարկը սրան այն է, որ այդ գումարը նրանք ոչ մեկին էլ չեն տալիս: Կրկին շեշտենք՝ դա մնում է իրենց սեփականությունը՝ ժառանգման իրավունքով: Այդ կուտակային գումարները չեն մտնում պետական բյուջե, դրանք ակտիվների կառավարիչների կողմից ներդրվում են տարբեր արժեթղթերում, բաժնետոմսերում, պարտատոմսերում, ավանդներում եւ երկարաժամկետ շրջանառության արդյունքում ավելանում են՝ դառնալով մարդու եկամուտներին հնարավորինս մոտ կենսաթոշակ: Կառավարիչները գտնվելու են ԿԲ խիստ վերահսկողության տակ, որոնց հնարավոր է փոխել ցանկության դեպքում:

*Տես էջ 3*

# Հայկական դրամի 20-ամյակը



Այսօր կնշվի հայկական դրամի թողարկման 20-ամյակը: Այդ կապակցությամբ ժամը 16-ին Հայաստանի ազգային պատկերասրահի Որմնանկարների դահլիճում Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը ընդունելություն է հրավիրել, իսկ ժամը 19.30-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա տոնական միջոցառում:

# Որտե՞ղ էր Լուկաշենկոն Բաքվում

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Նոյեմբերի 20-ի օրվա երկրորդ կեսին Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հասել է Բաքու: Տպավորություն է ստեղծվում, թե նա օդանավակայանից անմիջապես ուղեւորվել է Ալիեւների ընտանեկան գերեզմանոց: Համենայն դեպս, ըստ պաշտոնական հաղորդագրության, Բելառուսի նախագահը նույն օրը «ծաղկեպսակ է դրել» եւ Հեյդար Ալիեւի, եւ Զարիֆա Ալիեւայի (Իլհամ Ալիեւի մոր), եւ Ազիզ Ալիեւի (Իլհամ Ալիեւի մորական պապի) շիրիմներին: Ընդ որում, հիշատակման այդ բոլոր այցելություններին նա մենակ էր, ինչը չափազանց տարօրինակ է:

Բելառուսական լրատվամիջոցները փորձել են պարզել, թե որտե՞ղ է Բաքվում իջեւանել իրենց երկրի նախագահը: Բաքվի եւ ոչ մի առաջնակարգ հյուրանոց չի հաստատել, որ Լուկաշենկոն իրենց կենվորն է, ինչից ադրբեջանական մամուլը եզրակացրել է, որ Իլհամ Ալիեւը Բելառուսի նախագահին «հյուրընկալել է սեփական հարկի տակ»:

*Տես էջ 8*

# Օդի ջերմաստիճանը կբարձրանա 3-4 աստիճանով

Հանրապետությունում առաջիկա մի քանի օրերին սպասվում է փոփոխական եղանակ: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից, նոյեմբերի 22-ին հանրապետության առանձին շրջաններում ժամանակ առ ժամանակ սպասվում են թույլ տեղումներ եւ մառախուղ, 23-25-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին արեւելյան՝ 3-8 մ/վրկ արագության, օդի ջերմաստիճանը նոյեմբերի 23-24-ին ցերեկը կբարձրանա 3-4, արեւելյան շրջաններում՝ 5- 7 աստիճանով:

Երեւանում նոյեմբերի 22-ին սպասվում է ամպամածություն, ժամանակ առ ժամանակ՝ թույլ անձրեւ եւ մառախուղ, 23-25-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Նոյեմբերի 22-ին կգրանցվի 11 աստիճան, նոյեմբերի 23-ին՝ 13, նոյեմբերի 24-ին եւ 25-ին՝ 14 աստիճան:

# Խամենեին խոսեց «միջուկային» բանակցությունների եւ Իսրայելի «դատապարտվածության» մասին



Իրանի գերագույն հոգեւոր առաջնորդ, այաթոլլահ Ալի Խամենեին երկրի «Բասիջ» աշխարհազորի առջեւ ելույթ ունենալով՝ հայտարարել է, որ Իրանը չի հրաժարվի ատոմային մշակումներից: Նա նաեւ դատապարտել է «Վեցյակ»-Իրան բանակցություններում Ֆրանսիայի կոշտ դիրքորոշումը եւ հայտարարել է, որ Իսրայելի պետությունը «դատապարտված է անհետացման»:

«Իսրայելի վարչակարգը հենվում է խախուտ հիմքի վրա, իսկ որեւէ արհեստական երեւույթ չի կարող դիմանալ ժամանակի փորձությանը», հայտարարել է Խամենեին:

Նա ընդգծել է, որ Իրանը չի ընկրկի արտաքին ճնշումների եւ պատժամիջոցների դեմ հանդիման: Խամենեին ավելացրել է, որ Իրանը քեն չի պահում ամերիկյան ժողովրդի նկատմամբ եւ ձգտում է բարեկամական հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի հետ: Իսրայելական newsru.co.il կայքէջը գրում է, որ իրանցի աշխարհազորայինները նրա այդ հայտարարությունն ընդունել են «Մա՛հ ամերիկացիներին» բղավոցներով:

Քաղաքական մեկնաբաններից շատերը կարծում են, որ իրանցիների միջուկային ծրագրի շուրջը «Վեցյակի» երկրների եւ Իրանի վերսկսած բանակցություններում հնարավոր է համաձայնագրի ստորագրում՝ չնայած Իսրայելի կառավարության նախաձեռնած հակաիրանական դիվանագիտական արշավին:

# Այս հոդվածը Քիմ Քարդաշյանի մասին չէ



Եթե ասենք, որ հայկական ոչ մի լրատվամիջոց, անգամ՝ հանրային, թիվ մեկ, համահայկական, արեւմտամետ, ռուսամետ եւ այլն, իր նախագծերը մշակելիս կամ հոդվածաշար սկսելիս երբեք նախորոք սոցիալական հարցում չի անցկացնում, որեւէ նորություն ասած չենք լինի. սա վաղուց հայտնի տխուր եւ օբյեկտիվ պատճառներ ունեցող փաստ է: Հետեւաբար կարելի է եզրակացնել, որ հայկական բոլոր լրատվամիջոցները տեղեկատվություն տալու երկու ճանապարհ ունեն. տալ այն, ինչը ինչ-որ տեղերից ասում են՝ մեկ, եւ տալ այն, ինչը կատարվում է՝ երկու: Երկու պարագայում էլ լրատվամիջոցները չեն էլ հետաքրքրվում, թե այն, ինչը ինչ-որ տեղերից ասում են, կամ այն, ինչը կատարվում է, որքանո՞վ է հետաքրքրում հասարակությանը: Ի վերջո մեր լսարանը բավականին կրթված է՝ Քիմ Քարդաշյանի հետծննդաբերական վիճակի մասին լուրեր կարդալու կամ հայ շոուբիզնեսի այս կամ «հերոսի» ամուսնական մեծ ֆոտոշարքը դիտելու համար: Մյուս կողմից, մեր լսարանը խիստ մասնագիտացված չէ, որ ամեն օր, օրը մի քանի անգամ կարդա, ծանոթանա այն խոր եւ համապարփակ վերլուծություններին, թե ի՞նչ էր կատարվում Օբամայի ձվաձեւ աշխատասենյակում, երբ Պուտինը դուրս եկավ Կրեմլի իր կարմիր նստավայրից ճիշտ այն ժամին, երբ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը որոշել էր իր ընտանիքի անդամների ու համախոհների հետ թեյել, մինչ Էրդողանը հեռախոսով զրուցում էր Իլհամ Ալիեւի հետ:

Մեր լսարանի հետաքրքրությունները մեր լրատվական հոսքը չեն արտացոլում: Օրինակ, ո՞վ ասաց, որ այլեւս հետաքրքրական չէ, թե Բաքվի ո՞ր ճանապարհներով է անարգել ու հպարտորեն անցնում Ռամիլ Սաֆարովը: Ընդ որում, երբ նա նոր էր վերադարձել Բաքու, հայկական իրեն հարգող յուրաքանչյուր լրատվամիջոց իր պարտքն էր համարում օրական մի քանի անգամ (ով հնարավորություն ունի) ներկայացնել Սաֆարովի շուրջը տեղի ունեցող իրադարձությունները: Կամ ո՞վ ասաց, թե մեր հասարակությունն էլ ոչինչ չի ցանկանում իմանալ «երկրի ընտրված նախագահի» Րաֆֆի Հովհաննիսյանից, ով, հիշեցնենք իմիջիայլոց, «հրապարակից տուն չէր գնալու, մինչեւ չստանար ժողովրդի արդար քվեն»: Ո՞ւր «կորան» հայազգի վարորդ Հրաչ Հարությունյանի մասին պատմող տեղեկությունները, երբ նրա ոդիսականը դեռ չի ավարտվել, ի՞նչ եղավ «հայ ազգի ինքնությունը վիրավորած» ռուսական «Վեստի»-ի մեկնաբանուհու հետ, ինչո՞ւ էլ ոչ մի խոսք չկա Սյունիքի նախկին մարզպետի ու նրա որդու, ու նրանց՝ ահասարսուռ մականունով թիկնապահի մասին, «նրանց տան վրա հարձակում գործած» զինվորականներ Բուդաղյանների մասին. հասարակությանն այս ամենն ու այս մարդիկ էլ չե՞ն հետաքրքրում: Կամ Շանթը՝ նույնպես: Տպավորություն կա, որ ինչ-որ մի տեղից, ինչ-որ մեկը վերահսկում է այս լրահոսը, ու մեկեն, մկրատով կտրում այս տեղեկատվությունների շղթան, ընդ որում, այնպես, որ էլ ոչ ոք չի խոսում այս ամենի մասին... Եվ ծնվում են նոր «պետության ընտրված նախագահներ», նոր մարզպետներ, նրանց որդիներ, թիկնապահներ, ողբերգության մեջ հայտնված միգրանտներ, կրակող կամ կրակոց ընդունած զինվորականներ, որոնց մասին եւս բոլորը միանգամից եւ շատ սկսում են խոսել, եւ բոլորը միանգամից դադարում են խոսել:

Իսկ մեր լսարանը մեծ ուշադրությամբ, այս ամբողջ ընթացքում ու մշտապես հետեւում է, թե ի՞նչ փոփոխություններ է ստացել Քիմ Քարդաշյանի մարմինը ծննդաբերությունից հետո, մեր՝ այս ամենի համար բավականին կրթված ու գրագետ հասարակությունը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ֆինանսիստների եւ բանկիրների համահայկական երկրորդ համաժողովը



Նոյեմբերի 21-ին ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ տեղի ունեցավ Ֆինանսիստների եւ բանկիրների համահայկական 2-րդ համաժողովը, որին մասնակցում էին սփյուռքից ժամանած ֆինանսիստներ, ինչպես նաեւ Հայաստանի կենտրոնական բանկի, առեւտրային բանկերի, ապահովագրական եւ աուդիտորական ընկերությունների, վարկային կազմակերտությունների ղեկավարներ եւ ներկայացուցիչներ:

# Դասագրքերի եւ ուսուցչի ձեռնարկների փորձարկում

**ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը հրաման է ստորագրել, համաձայն որի՝ 2013թ. նոյեմբերից մինչեւ 2014թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում, համապատասխան ուսումնական հաստատություններում անցկացնել 2012 եւ 2013 թվականների մրցույթներով անցած դասագրքերի եւ ուսուցչի ձեռնարկների փորձարկում: Հրամանով հաստատվել է նաեւ դասագրքերի փորձարկման մեթոդական ուղեցույցը: Միաժամանակ, Դասագրքերի շրջանառու հիմնադրամին հանձնարարվել է փորձարկում իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններն ապահովել փորձարկվող դասագրքերով, ուսուցչի ձեռնարկներով եւ դասագրքերի փորձարկման մեթոդական ուղեցույցով:**

ՌՈԲՈՏԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

# Ինժեներական կրթության հեռանկարները Հայաստանի դպրոցներում



Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի «Երեւան Էքսպո» կենտրոնում հրավիրվել է կոնֆերանս՝ «Ինժեներական կրթության հեռանկարները Հայաստանի դպրոցներում» թեմայով:

Կոնֆերանսի հիմնական նպատակն առկա ինժեներական ծրագրերը ներկայացնելն ու Հայաստանի դպրոցական ինժեներական կրթության կարեւորության շուրջ հետաքրքրված բոլոր կողմերին համախմբելն էր:

«Նման համախմբումն անհրաժեշտ է առկա մտավոր ներուժն օգտագործելու, Հայաստանը բարձր տեխնոլոգիական երկիր դարձնելու գործում: Այս հարցում մեզ կօգնի հատկապես ռոբոտաշինության զարգացումը, որն էլ կհանդիսանա մեր երկրի մրցունակության ամրապնդման հեռանկարներից մեկը»,- նշել է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն **Կարեն Վարդանյանը**:

«Դպրոցական տարիքում ստացած գիտելիքները մնայուն են: Կրթական ծրագրերին նոր որակ հաղորդելու մեր ձգտումը կարեւոր առաքելություն ունի: Այն ռոբոտաշինությամբ հետաքրքրված սովորողների շրջանում կմեծացնի բացահայտելու եւ նորը ստեղծելու ձգտումը: Այս ամենին հասնելու համար, հարկավոր է ապահովել զարգացած ինժեներական մտքով սերունդների հերթափոխ»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Կոնֆերանսի ընթացքում ներկայացվել է «Նաիրի» կոնսորցիումի կողմից մշակված՝ ՏՏ ուսուցման ժամանակակից մեթոդաբանության վրա հիմնված լաբորատորիայի դպրոցական հայեցակարգը, ամփոփվել է կրթական անիմացիաների եւ խաղերի ստեղծման մրցույթը: Ցուցադրվել են նաեւ ԻՏՁՄ կողմից իրականացվող՝ «Ռոբոտներն առօրյայում» գաղափարների մրցույթի մասնակից նախագծերը:

Միջոցառման ընթացքում, «Ռոբոտաշինությունն սկսվում է դպրոցից» ծրագրի շրջանակներում, խմբակավարներին տրամադրվել են ռոբոտ կոնստրուկտորային կոմպլեկտներ:

Ծրագրի իրականացման նպատակով միայն 2013 թ.-ին, ՎիվաՍել-ՄՏՍ-ն հատկացրել է 30 միլիոն դրամ:

# Եվս մի նախապայման Թուրքիայից՝ «պատմական հանձնաժողով

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն, ով վերջին մի քանի օրերին հանդես է գալիս, իր խոսքով՝ հայ-թուրքական հարաբերությունները նորմալացնելուն ուղղված քայլերով, այդ մասին արած հայտարարություններում հնչեցրած նախապայմաններին հավելել է «պատմական հանձնաժողովի» պայմանը եւս:

Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով «Անադոլու» լրատվական գործակալությանը, թուրքական խորհրդարանում բյուջետային հանձնաժողովի նիստում ունեցած ելույթում Դավութօղլուն հայտարարել է, որ շարունակելու են թուրք-հայկական հարաբերությունները նորմալացնելու եւ Հայաստանի հետ ստորագրված արձանագրությունների շրջանակում «համատեղ պատմական հանձնաժողովի ներառմամբ» զուգահեռ քայլեր կատարելու աշխատանքները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Թէքէեան եւ քոյր կազմակերպութիւններ գումարեցին իրենց առաջին խորհրդաժողովը

Թէքէեան մշակութային միութեան եւ իր քոյր միութիւններու առաջին խորհրդաժողովը տեղի ունեցաւ Լոնդոնի Թարա Քոփթըն հիւրանոցին մէջ, հիւրընկալութեամբ եւ կազմակերպութեամբ ԹՄՄ-եան Լոնդոնի մասնաճիւղի վարչութեան:

Խորհրդաժողովին իրենց մասնակցութիւնը բերին Կանադայէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, Յունաստանէն, Եգիպտոսէն, Ֆրանսայէն, Զուիցերիայէն, Լիբանանէն եւ Անգլիայէն պատգամաւորներ, ներկայացնելով Թէքէեան մշակութային միութեան չորս գլխաւոր հիմնադրամներէն (Trust) երեքը, չորրորդը ներկայանալով անպաշտօն կերպով: ԹՄՄ-ի երկու ղեկավար դէմքեր վերջին օրերու չնախատեսուած եւ ստիպողական պատճառներով չկրցան մասնակցիլ խորհրդաժողովին, սակայն տարբերաբար անոնք տեղեակ պահուեցան ժողովի ընթացքէն եւ ի պահանջեալ հարկին տուին իրենց խորհուրդները:

Լոնդոնի մասնաճիւղի ատենապետը՝ դոկտ. **Հրաչ Գույումճեան**, իր բացման խօսքին մէջ ողջունեց պատգամաւորները եւ ներկայացուց խորհրդաժողովի նախադրեալները, հակիրճ անդրադարձ մը կատարելով միութեան ներկայ կացութեան վրայ եւ առաջարկեց ժողովին օրակարգը: Ան մանրամասնեց ԹՄՄ-ի դեմոկրատական սկզբունքները, որպէս ՌԱԿ-ի կողմէ հաստատուած կազմակերպութիւն մը եւ ցաւ յայտնեց, որ միջինարեւելեան կարգ մը երկիրներու ԹՄՄ-եան մասնաճիւղեր զանազան պատճառաբանութիւններով բացակայեցան:

Այս հաւաքը իր տեսակին մէջ առաջինն ըլլալով 1947-էն ի վեր. որպէս թեմա ունէր՝ համարկում (integration), համալրում (complementarity) եւ յարատեւում (sustainability): Երկու օրերու նիստերով պատգամաւորները վերատեսութեան ենթարկեցին մասնաճիւղերու եւ քոյր միութիւններու Սփիւռքի եւ Հայաստանի ներկայ կացութիւնը, որպէսզի կարենան նոր ուղեգիծերով հաստատել նոր տեսլականներ եւ առաքելութեան ճշդումներ: Հիմնականին մէջ այս աշխատանքին միջոցաւ կատարուեցաւ նախատեսումը եւ քննարկումը շարք մը տնտեսական, գործնական եւ կառուցային հարցերու: Մանրամասն եւ ամբողջական կերպով վերլուծումի ենթարկուեցան միութեան կարողականութիւնները, տկարութիւնները, պատեհութիւնները եւ անոնց սպառնացող պարագաներ եւ այդ վիճարկութեամբ արդիւնքները ներմուծուեցան ապագայի գործունէութեան ծրագիրներու մէջ:

Խորհրդաժողովի մասնակիցները քննարկեցին մամուլի, ապագայի ծրագիրներու, տնօրինումի մոդելներու, նորարարական մօտեցումներու հարցեր՝ ԹՄՄ-ի գլխաւոր կազմակերպութիւններու եւ հիմնարկներու յարաբերութիւններու լոյսին տակ:

Յարափոփոխ եւ մրցակցական աշխարհի մը մէջ որոշ ազդեցութիւններու ենթակայ են ԹՄՄ-ն ու քոյր կազմակերպութիւնները, եւ որպէսզի այդ մարտահրաւէրները դիմագրաւուին աւելի լաւ պատրաստուած մեկնարկներէ, շարք մը որոշումներ, հաստատուած ժամանակացոյցի մը համաձայն, որդեգրուեցան: Անոնք են՝

1. Համաշխարհային ցանցի մը պաշտօնական կազմակերպումին համար որոշուեցաւ հաստատել կեդրոն մը Երեւանի մէջ, գործնական կապեր ունենալով Պոստոնի հետ:

2. Հաստատել չորս հոգիներէ բաղկացած ժամանակաւոր յանձնախումբ մը, որ վերատեսութեան ենթարկէ գրաւոր եւ էլեկտրոնային մամուլը եւ պատրաստէ աշխատանքային ծրագիր մը յառաջիկայ վեց ամիսներու ընթացքին:

3- Հաստատել 9 անդամներով Համասփիւռքեան Համադրող (coordinating) յանձնախումբ (ՀՀՅ) մը, որ հանդիսանայ ԹՄՄ-ի «խօսնակը», որ ունենայ «մտածումներու խորհուրդ»ի (think tank) եւ հարցեր ու հակամարտութիւններ լուծող դեր: Նաեւ այս յանձնախումբը պիտի յստակացնէ ԹՄՄ-ի նոր առաքելութիւնը, պիտի հսկէ եւ կիրարկէ ընդունուած որոշումներու գործադրութիւնը տեղական եւ համաշխարհային մակարդակներով, տրուած ժամանակացոյցին համաձայն:

ՀՀՅ-ի անդամներուն մաս պիտի կազմեն չորս հիմնադիրներու ներկայացուցիչներ: Երեք հիմնադրամներու պարագան արդէն յստակ է, իսկ չորրորդը, որ վերապահուած է ՌԱԿ-ին, կախեալ է մեր ընտանիքի կազմակերպութիւններու պառակտումներուն յաջող լուծումներէն: ՀՀՅ-ն իր տեղեկագրութիւնը պիտի ներկայացնէ 2015 թուականի կէսերուն Երեւանի Թէքէեան կեդրոնին մէջ գումարուելիք ժողովին ընթացքին:

Նոյեմբեր 8-ին երեկոյեան պաշտօնական ընդունելութիւն մը կազմակերպուած էր Լոնդոնի ԹՄՄ-եան վարչութեան կողմէ ի պատիւ մասնակից պատգամաւորներու, ներկայութեամբ շուրջ 50 համայնքային ներկայացուցիչներու: Լոնդոնի ԹՄՄ-եան մասնաճիւղի ատենապետ՝ դոկտ. Հրաչ Գույումճեանի բացման եւ ողջոյնի խօսքերէն ետք, Հայ եկեղեցւոյ Միացեալ Թագաւորութեան եւ Իրլանտայի հոգեւոր առաջնորդ եւ հայրապետական պատուիրակ՝ Վահան արք. Յովհաննէսեան ողջունեց ներկաները, բարձրօրէն գնահատեց Թէքէեան մշակութային միութեան հայ մշակոյթի պանծացման գործունէութիւնները եւ յաջողութիւն մաղթեց միութեան ազգանուէր ծրագիրներուն: Պատգամաւորներուն անունով խօսք առաւ ԹՄՄ-ի Միացեալ Նահանգներու եւ Կանադայի Կեդրոնական վարչութեան անդամ՝ **Երուանդ Ազատեան**, որ շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալ յանձնախումբին եւ արագ անդրադարձ մը կատարեց կազմակերպութեան առաքելութեան մասին: Հայաստանի Հանրապետութեան դեսպանին քաղաքէն դուրս գտնուելու պատճառաւ, խօսք առաւ անոր ներկայացուցիչը՝ պրն. Արա Մարգարեանը: Ան լաւագոյն մաղթանքներ փոխանցեց ԹՄՄ-ին, որ իր գտնուած համայնքներուն մէջ կը հանդիսանայ կենսական ուժ մը:

Նոյեմբեր 9ին հանդիսաւոր ճաշկերոյթով մը աւարտեցաւ խորհրդաժողովին ընկերային օրակարգը:

**Խորհրդաժողովի ատենապետ**
**Դոկտ. Հրաչ Գույումճեան**
**Խորհրդաժողովի ատենադպիր**
**Տոքթ. Գ. Երզնկացեան**

# Կուսակային համակարգի դեմ բողոքողներին կտրվի գրավոր պատասխան

**Կենսաթոշակային նոր՝ պարտադիր կուտակային համակարգի դեմ բողոքողները երեկ կառավարության շենքի առջեւ էին հավաքվել: Նրանց հիմնական պահանջն էր հետաձգել նոր համակարգի եւ մասնավորապես կուտակային բաղադրիչի կիրառումը: Նրանք կառավարությունից պահանջում էին պատասխանել իրենց գրավոր պահանջներին: Ցուցարարների հետ հանդիպեց կառավարության աշխատակազմի փաստաթղթերի ընդունելության եւ դիմումների վարչության պետ Ալեքսանդր Ղազարյանը: Նա խոստացավ ներկայացրած գրավոր պահանջներին գրավոր պատասխաններ տալ, միաժամանակ նշելով, որ այս օրենքի հետ կապված կառավարությունը բազմիցս պարզաբանումներ է տվել:**

Ա. Ս.

ՕՐԱԿԱՐԳ

# Պարտադիր կուտակային համակարգ՝ դժգոհություններ եւ փաստարկներ

*1-ին էջից*

**Առաջին հայացքից թվում է, որ իսկապես՝ բողոքողները ներկան են ավելի կարեւորում, քան հեռավոր թվացող կենսաթոշակային տարիքը, մտածելով մինչ այդ՝ «ով մեռած, ով ողջ»: Սակայն, մյուս կողմից, երբ գա այդ կենսաթոշակային 63 տարեկանը, որը հիմա թվում է հեռավոր, բայց երբեւէ գալու է, եւ այն ժամանակ նրանք տեսնեն իրենց ներկայիս աշխատավարձի համեմատ էապես ցածր կենսաթոշակ, չե՞ն ասի «էս ի՞նչ պետություն է, ի՞նչ թոշակ է տալիս»: Կասեն անշուշտ, ինչպես ասում են մեր տարեցները հիմա: Սակայն, ի տարբերություն մեր տարեցների, որոնց հնարավորություն չէր ընձեռնվել կուտակելու ապահով ծերության համար, եւ որոնք բարոյական իրավունք ունեն դժգոհել ներկայիս թոշակների չափից, նույն իրավունքը այն ժամանակվա կենսաթոշակառուները չեն ունենա: Չեն ունենա, բայց հաստատ կդժգոհեն, մոռանալով, որ ժամանակին դեմ էին իրենց ապագա բարձր կենսաթոշակը ձեւավորելու հնարավորությանը: Կմոռանան նաեւ, որ բարձր կեսնաթոշակ ունենալուն հավասարապես օգնում է պետությունը: Սա երկրորդ կարեւոր փաստարկն է նոր համակարգից բողոքողների դեմ:**

**2014-ի պետական բյուջեում շուրջ 20 մլրդ դրամ է հատկացվել պարտադիր կենսաթոշակային համակարգի մեջ մտնողների ապագա կենսաթոշակներին պետության կողմից 5 տոկոսների տրամադրման, այսինքն՝ համաֆինանսավորման համար: Փաստորեն, այդքան գումար չի տրամադրվելու ներկայիս կեսնաթոշակառուներին, նպաստառուներին, ռազմական կամ առողջապահական ծախսերին, սոցիալական նպատակային ծրագրերին, աշխատավարձերին, այլ տրամադրվելու է մինչեւ 40 տարեկան անձանց բարեկեցիկ ծերությանը, իսկ վերջիններս էլ դժգոհում են: Այլ բան, եթե բողոքեին նրանք, ում այդ գումարը ուղղվելու փոխարեն՝ ուղղվում է ներկայումս բարձր աշխատավարձ, ապագայում՝ բարձր կենսաթոշակ ստացողներին:**

**Երրորդ հակափաստարկն այն է, որ պետությունը, անկախ նրանից, թե այս պահին ո՞ր ուժը կամ ովքե՞ր են կառավարում, պարտավոր է մտահոգվել ոչ միայն այսօրվա իրավիճակի, այլեւ ապագայի համար: Ներկայիս կառավարության համար ստանձնել պատասխանատվություն նման բարեփոխում անցկացնելու, որի արդյունքները երեւալու են առնվազն 23 տարի հետո, երբ բոլորովին այլ կառավարություն է լինելու, ինչ-որ տեղ ռիսկային է: Ի վերջո, կարող էր ներկայիս կառավարությունը թողնել սա հաջորդ կառավարությանը, նա էլ՝ հաջորդին եւ այդպես շարունակ: Սակայն բանն էլ հենց այն է, որ այդպես չի կարող անվերջ շարունակվել:**

**Կենսաթոշակային ներկայիս համակարգը, երբ մենք վճարում ենք մեր ծերերի կենսաթոշակի համար, եւ որը շարունակում է մնալ ցածր, պարզապես դատապարտված է: Եվ որքան շուտ քայլեր արվեն փոխելու ուղղությամբ, այնքան ավելի արագ պետության եւ մեր բոլորիս վրա ֆինանսական բեռի ծանրացումից հնարավոր կլինի հեռանալ: Եթե շարունակվի այս համակարգը, ապա տարեցտարի ավելի ու ավելի շատ գումարներ եկամտային հարկից պետք է ուղղվեն կենսաթոշակների վճարման համար, քանի որ աշխատողների համեմատ մեր երկրում ավելանում են կենսաթոշակառուների թիվը եւ նրանց վճարվող կենսաթոշակները: Այսինքն, ունենում ենք մի իրավիճակ, երբ մի կողմից ֆինանսական բեռը ծանրանում է աշխատող բնակչության վրա, մյուս կողմից էլ՝ անգամ այդ գնով չենք ունենում արժանապատիվ կենսաթոշակներ: Այս իրավիճակում ոչ մի կերպ արդար չի կարելի համարել այն մարդկանց դժգոհությունը, որոնց պետությունը պարտադրում է այսօր ձեւավորել սեփական կենսաթոշակը, մյուսների հաշվին իր կողմից գումար է տրամադրում, չեզոքացնում վաղվա ֆինանսական բեռի ծանրացումը մեր բոլորիս վրա, նպաստում, որպեսզի ապագայում մարդիկ ունենան բարձր կենսաթոշակ եւ չհայտնվեն այսօրվա կենսաթոշակառուների վիճակին:**

**Վերադառնալով «ի՞նչ իմանաս 20 կամ 30 տարի հետո ինչ կլինի» հարցին, ապա այդ տրամաբանությամբ ընդհանրապես ոչինչ ձեռնարկել պետք չէ, քանի որ իսկապես մեզ տրված չէ կանխատեսել ապագան: Սակայն, տվյալ դեպքում, պայծառատեսության խնդիր չկա էլ, քանի որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների սկսել են մշակվել ավելի քան 10 տարի առաջ, դրանք շատ մանրամասն են քննարկվել, ուսումնասիրվել համաշխարհային փորձը, կատարվել երկարաժամկետ հաշվարկներ: Ընդ որում, մասնագետները պնդմամբ, որեւէ երկրի մոդել նույնությամբ չի վերցվել, հաշվի են առնվել տարիների ընթացքում արդեն նկատված խնդիրները: Ուստի համակարգի ներդրման կամ դրա մի բաղադրիչի կասեցումը եւս մեկ տարով պարզապես իմաստ չունի:**



# Հայ-թուրքական ոչ պաշտոնական երկխոսությունը մեր օրերում

Նոյեմբերի 2-4-ը Ստամբուլի Բողազիչի (Բոսֆորի) համալսարանում տեղի ունեցած մահմեդականացած (մահմեդականացված) հայերի համաժողովը, նույն օրերին եւ նույնպես Ստամբուլում Արեւմտահայոց ազգային համագումարի պատվիրակության հանդիպումները թուրքական քաղաքական եւ իրավաբանական շրջանակների հետ առիթ են ի մի բերելու հայ-թուրքական առնչությունների ողջ փաթեթը եւ վերլուծելու՝ հասկանալու համար, թե ո՞ւր են տանում այս առնչությունները, մոտեցնո՞ւմ են դրանք արդյոք Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը եւ ո՞րն է լինելու դրա հետեւանքը: Վերջին շաբաթներին հայ փորձագետները փորձել են հասկանալ եւ գնահատել Թուրքիայում Հայաստանին եւ հայերին վերաբերող տեղեկությունների հրապարակման գործընթացը՝ փորձելով դրանից ինչ-ինչ եզրակացություններ անել: Հայտնի է, որ երկու պետությունների խորհրդարաններում սառեցված հայ-թուրքական արձանագրությունները պաշտոնական առումով այդ հարաբերությունների կարգավորման տեղ առայժմ չեն թողնում: Սակայն փաստ է նաեւ, որ քաղաքական, հասարակական, մշակութային, գիտական շրջանակների ներկայացուցիչները շփվում են միմյանց հետ, թուրքական մամուլում գնալով շատանում են Հայաստանին եւ հայերին վերաբերող նյութերը: Փորձենք ի մի բերել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի շեմին երկկողմ առնչությունների արդի վիճակը:

### Մահմեդականացած հայերի համաժողովը եւ ծպտյալ հայերի հիմնախնդիրը

Ստամբուլի հեղինակավոր համալսարաններից մեկում իսլամ ընդունած հայերի ժառանգների համաժողովը ոչ այնքան գիտական, որքան հրապարակային հասարակական միջոցառում էր: Եթե մի քանի տարի առաջ Թաքսիմ հրապարակում ապրիլի 24-ին հավաքված ոգեկոչման հանրահավաքը կոտրեց Հայոց ցեղասպանության վրա դրված թուրքական պաշտոնական տաբուն, ապա այս համաժողովը բոլորովին այլ դիրքերից քանդեց այն՝ թուրքական ականջի համար սովորական դարձնելով ցեղասպանություն եզրը: Ինչ գնահատական էլ որ տանք երբեմնի քրիստոնյա հայերի՝ 1915 թվականին եւ դրանից հետո իսլամ ընդունած լինելու երեւույթին, անկարելի է չընդունել, որ 90-ամյա արգելքից հետո իրենց պապերի կրած չարչարանքների ու դժվարությունների մասին խոսող երբեմնի հայերի թուրքացած ու քրդացած այսօրվա սերնդի ներկայացուցիչները հարգանքի են արժանի: Ինքը՝ հայերի մահմեդականացման երեւույթը, Թուրքիայում բոլորովին էլ նոր չէ: Դեռ միջնադարում հայտնի են եղել հայերի մահմեդականացման դեպքեր, որոնց մասին դեռ հարյուր տարի առաջ գրում էին ժամանակի ճանաչված արեւելագետ-թուրքագետները: Սակայն Հայոց ցեղասպանության իրագործումից հետո Թուրքիայում մինչեւ այս համաժողովը երբեւէ բարձրաձայն, առավել եւս հրապարակայնորեն չի խոսվել հայ նախնիների, մասնավորապես՝ եղեռն տեսած հայ նախնիների մասին: Պետք է խոստովանել, որ այս համաժողովը միանգամից եւ հանկարծակի տեղի ունեցած իրադարձություն չէր: Համաժողովի բազմաթիվ մասնակիցներ՝ իրենց թուրք, քուրդ, զազա, համշենցի եւ այլ էթնիկական խմբերի ներկայացուցիչ համարող մարդիկ ավելի վաղ արդեն հրապարակային առանձին ելույթներ ունեցել էին՝ հասարակության դատին հանձնելով իրենց հայտնի պատմությունները Հայոց ցեղասպանության զանազան դրվագների մասին: Այնպես որ Բողազիչի համալսարանի համաժողովն այդ մարդկանց՝ սեփական ինքնությունը բացահայտելու, տասնամյակների վախից ու տագնապից ազատվելու մի հրապարակային իրադարձություն էր: Ճիշտ են այն գիտնականները, որոնք գտնում են, որ վերոհիշյալ համաժողովը քիչ գիտական էր, չնայած այնտեղ գիտական ճանաչում ունեցող անհատներ շատ կային: Փնտրել ակադեմիականություն այս համաժողովի ելույթներում առանձնապես իմաստ չունի: Ականատեսների վկայությամբ՝ լեփ-լեցուն դահլիճում անցած եռօրյա համաժողովը ավելի շատ հասարակական-քաղաքական իրադարձություն պետք է համարել, որն ուներ մեկ անվիճելի նպատակ՝ հայ նախնիներ ունեցած մարդկանց նկատմամբ վերացած համարել տասնամյակների տաբուն: Հաջողվե՞լ են արդյոք համաժողովի կազմակերպիչներն իրենց այդ նպատակի իրագործման հարցում, դեռ ցույց կտան ծավալվող հասարակական գործընթացները: Սակայն այդ համաժողովը պատճառ եղավ, որ հայ արեւելագետների եւ քաղաքագետների շրջանում հառնի իսլամացած հայերի նկատմամբ վերաբերմունքի հարցը: Եվ իսկապես, ինչպե՞ս վերաբերվել մարդկանց, որոնք իսլամադավան են, խոսում են թուրքերեն կամ քրդերեն, սակայն համարում են իրենց արմատներով հայ՝ երբեմն պահպանած լինելով հայկական ծեսերի, սովորույթների, մշակույթի տարրեր: Մինչեւ 20-րդ դարը այդպիսի հայերի նկատմամբ առանձնապես ձեւավորված վերաբերմունքի կարիք չկար: Կար քրիստոնյա արեւմտահայությունը, որը եթե ոչ ամենուրեք մեծամասնություն, ապա շատ ու շատ տարածքներում ստվար ու ինքնակազմակերպված տարր էր Օսմանյան կայսրությունում: Սակայն Արեւմտյան Հայաստանում, հարակից թուրքաբնակ եւ քրդաբնակ շրջաններում, Փոքր Ասիայի խորքերում, բնաջնջվելու հետ մեկտեղ, ինչպես պարզվում է, հոծ հայկական զանգվածներ բռնի մահմեդականացվեցին՝ դրանով փրկելով իրենց գոյությունը: Ցեղասպանություն հասկացությունը ներառում է ոչ միայն զանգվածային բռնագաղթն ու կոտորածները, այլեւ բռնի կրոնափոխությունը: Այնպես որ մահմեդականացած հայերի ժառանգների փաստորեն ձեւավորված ուրույն ինքնության ձեւակերպումը 1915-1923 թվականների իրադարձությունների գնահատականը չի փոխում: Այդ մարդիկ, փաստորեն, ուզում են ազատվել նախորդ երկու սերունդներին պարտադրված կապանքներից եւ ազատ լինել իրենց ինքնության արտահայտման կամ իրենց ինքնությանը վերադառնալու հարցերում: Ոմանք ասում են, թե Թուրքիայում նման մարդիկ մի քանի տասնյակ հազար են, ոմանք էլ պնդում են, թե նրանց թիվը հասնում է մի քանի միլիոնի: Հայաստանցի արեւելագետները վերջին տարիներին հետաքրքրական ուսումնասիրություններ են կատարել, որոնք գալիս են փաստելու, որ Հայոց ցեղասպանության տարիներից հետո անցած տասնամյակների ընթացքում այս մարդիկ ուրույն խումբ են կազմում մահմեդական միջավայրերում, որոնց ծագման մասին տեղեկությունները եթե հայտնի էլ են բոլորին, ապա առաջներում դրա մասին առանձնապես չէին խոսում: Պոլսի հայոց պատրիարքարանին մոտ կանգնած տարբեր աղբյուրներից իմանում ենք, որ գնալով շատանում է մկրտություն խնդրող քրդախոսների եւ թուրքախոսների թիվը, եւ որ հայ հոգեւորականները զանազան պայմաններ են դնում նրանց քրիստոնեության վերադարձնելու ճանապարհին:

Կասկածից վեր է, որ Թուրքիայում ընթացող ժողովրդավարացման ընդհանուր գործընթացի մեջ իրենց ինքնությանը վերադառնալու փորձերը էական եւ կարեւոր տեղ են գրավում: Վստահորեն կարելի է ասել, որ հասունացել է, օրինակ, Հայաստանում մահմեդականացած հայերի կամ ծպտյալ հայերի նոր ինքնության ուսումնասիրությանը նվիրված մեծ գիտական համաժողով հրավիրելու հարցը: Այդպիսի համաժողովի ժամանակ կարելի կլիներ ժամանակակից գիտության դիրքերից փորձել ձեւակերպել մերօրյա հայության վերաբերմունքը դեպի այդ ուրույն էթնիկական խմբերը:

### Արեւմտահայոց ազգային համագումարի հետապնդած պայմանները

Նույն օրերին Ստամբուլում էր գտնվում «Արեւմտահայոց ազգային համագումար» միջազգային ոչ կառավարական կազմակերպության պատվիրակությունը: Համագումարի ազգային խորհրդի անդամները հանդիպել են թուրքական քաղաքական եւ իրավաբանական շրջանակների հետ: Պատվիրակության անդամներից մեկի՝ պատմական գիտությունների դոկտոր **Վահան Մելիքյանի** խոսքով, Արեւմտահայոց ազգային համագումարը համարում է, որ ժամանակակից Թուրքիայում արդեն քննարկվում է Հայոց ցեղասպանության թեման եւ հասունացել է ցեղասպանության հատուցման հարցը: Որպես հատուցման դրսեւորում, այդ կազմակերպության ակտիվիստների կարծիքով, պետք է դրվի հայրենազրկված արեւմտահայերի Թուրքիա վերադառնալու եւ իրենց սեփականությանը տեր կանգնելու պահանջը: Դրան զուգահեռ պետք է սկսի բարձրացվել հայկական հանրային սեփականություն եկեղեցիների, դպրոցների, ազգային հաստատությունների ու նրանց լքյալ գույքի վերադարձման հարցը:

Ինձ հետ զրույցում Ազգային ժողովի պատգամավոր **Արագած Ախոյանը** ցույց տվեց թուրքական մի շարք թերթերում՝ «Թարաֆում», «Ջումհուրիեթում», «Սաբահում», «Զամանում», «Վան Գյոլում» հրապարակված բազմաթիվ նյութեր Հայաստանի ու հայերի մասին, ինչը գալիս է ապացուցելու, որ ժամանակակից թուրքական հասարակության մեջ մի կողմից բնական հետաքրքրություն կա դեպի հայկական թեման, մյուս կողմից այդ մասին գրելն այլեւս արտոնված է եւ տաբուները հանված են:

Փաստորեն սա նշանակում է նաեւ, որ հասարակական մակարդակներում հայ-թուրքական երկխոսությունը շարունակելու տեղ կա: Ըստ Արագած Ախոյանի՝ հենց թուրք իրավաբանների աջակցությամբ իրենք ձգտելու են թուրքական դատարաններում հայցեր ներկայացնել արեւմտահայերի հանրային սեփականությունը վերադարձնելու վերաբերյալ: Անշուշտ, մեծ է հավանականությունը, որ թուրքական դատարանները ազգայնականների ճնշման տակ չեն բավարարի այդ հայցերը: Բայց եթե դա տեղի ունենա, ապա Արեւմտահայոց ազգային համագումարի գործիչները հայցեր կներկայացնեն եվրոպական դատարաններ: Ահա այսպես, քայլ առ քայլ նրանք մտադիր են վերադարձնել եւ վերանորոգել հայկական վանքերն ու եկեղեցիները, վերադարձնել բռնագրավված ազգային կալվածքները, հետապնդել փոխհատուցման այլ խնդիրներ:

Այստեղ ծագում են բազմաթիվ հարցեր: Մեր հասարակության մեջ, ինչպես մենք բոլորս լավ գիտենք, առայժմ ձեւակերպված չեն Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում հատուցման պահանջի տակ հասկացվող մանրամասները: Հայկական քաղաքական տարբեր շրջանակներում այս հարցում տարբեր մեկնաբանություններ կարելի է լսել: Բայց այն հանգամանքը, որ այսօրվա Թուրքիայում սկսել են պարզ եւ բաց խոսել Հայոց ցեղասպանության իրողության մասին, լուսաբանել այդ թեման լրատվամիջոցներում, քննարկել այդ թեման թուրքական եւ քրդական քաղաքական շրջանակներում, ելքեր փնտրել նվազագույն կորուստներով այդ հարցին ընդունելի լուծումներ տալու համար, մեծապես արագացնում է հայ ժամանակակից իրականության մեջ պահանջատիրության 21-րդ դարին հարիր ձեւակերպում տալու եւ հատուցում ակնկալելու խնդիրը:

Արեւմտահայոց ազգային համագումարի ներկայացուցիչները համոզված են, որ հատուցման պահանջների իրականացման ճանապարհին արեւմտահայերի ժառանգների կողմից խորհրդանշական գումարների փոխանցումը այդ նպատակների համար կարող էր խորհրդանշել այն, որ նրանք լիազորություն են ստանում հայրենազրկված արեւմտահայերի սերունդների կողմից այդ հարցերը Թուրքիայում բարձրացնելու եւ միջազգային իրավական հարթակներում լուծելու համար: ԱԱՀ-ի գործիչներն ինձ պատմեցին նաեւ Ստամբուլում գրասենյակ բացելու մտադրության մասին, որը ժամանակակից թուրքական իրավունքի շրջանակներում պետք է սկսի հետապնդել հատուցման խնդիրը: Այս մոտեցման կողմնակիցները Հայաստանում եւ Սփյուռքում գնալով շատանում են: Սա նշանակում է, որ ազգային հնչողություն ունեցող այս խնդիրների լուծման հարցում ավելի մեծ թվով ազդեցիկ ու հեղինակավոր մարդիկ ընդունում են Ցեղասպանության ճանաչման եւ հատուցման խնդրի նման ձեւակերպումը:

Անշուշտ մեր իրականության մեջ կա նաեւ այլ մոտեցում՝ բոյկոտել Թուրքիան մինչեւ Հայոց ցեղասպանության փաստի ամբողջական ընդունումն ու հայության իրավունքների վերականգնումը: Սակայն մեր հասարակական-քաղաքական հրապարակային հնչողություն ունեցող կարեւորագույն հարցերի շրջանակում Թուրքիայում տեղի ունեցող փոփոխությունների լույսի ներքո մեր ազգային պահանջների ճշգրիտ ձեւակերպման եւ արտահայտման հարցը դառնում է կարեւորագույններից մեկը: Մանավանդ որ առջեւում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցն է, երբ բազմաթիվ ու բազմատիպ դժվարությունների դիմակայող հայությունը նորից մեկտեղվելու է, նորից դառնալու է բռունցք, նորից աշխարհին հիշեցնելու է իր արդար պահանջը:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Վրաստանի ոչսաակաշվիլիական խորհրդարանը լեզվի հռչակագիր է քննարկում



«Տարածաշրջանային եւ տեղական լեզուների մասին» Եվրոպայի խորհրդի հռչակագրի վավերացման համար խորհրդարանական քննարկումներ են ընթանում: Վրաց խորհրդարանի մարդու իրավունքների եւ քաղաքացիական ինտեգրման հանձնաժողովի նախագահ Էկա Բեսելիայի այս հայտարարությունը ներկայացրել է «Հարավային դարպաս» կայքէջը:

Ըստ այդմ, Էկա Բեսելիան նման հայտարարություն է արել ի պատասխան Վրաստանի հայ համայնքի «Միություն» տեղեկատվական կենտրոնի հարցերի:

Բեսելիայի խոսքերով՝ նախկին նախագահը բացասական քարոզչություն է իրականացրել այդ հարցի շուրջը, ինչի պատճառով հասարակության շրջանակներում առաջացել է վատ ազդեցություն:

«Մենք այս հարցի շուրջն անցկացնում ենք քննարկումներ եւ խորհրդակցություններ, ինչպես ներքին, այնպես էլ Եվրոպայի խորհրդի հետ, որի առաջ էլ ստանձնել ենք այդ պարտավորությունը», տեղեկացրել է վրացի պատգամավորը: Նրա խոսքերով՝ այս հարցի կապակցությամբ, առաջին հերթին անհրաժեշտ է բնակչության հետ անցկացնել որոշակի տեղեկատվա-լուսավորչական աշխատանք:

«Սաակաշվիլին, ցավոք, շատ բացասական քարոզչություն է սկսել: Հիշում եք, ոչ այնքան վաղուց էր, ԶԼՄ-ներում այնպիսի սյուժեներ էին տարածված, որտեղ նրա ներկայացուցիչները բացատրում էին եւ շատ բացասական մեկնաբանություններ անում, ասում, թե սա դավաճանություն է եւ ուղղված է պետության շահերի դեմ: Սա, իհարկե, շատ վատ ազդեցություն ունեցավ հասարակության վրա», պարզաբանել է մարդու իրավունքների եւ քաղաքացիական ինտեգրման հանձնաժողովի նախագահը:

Բեսելիան ընդգծել է, որ հասարակությունը պետք է տեղեկացված լինի, թե ինչ է դա, ինչ է նշանակում: «Դեռ աշխատանքներ պետք է կատարենք, որ մենք պատրաստ լինենք հաջորդ քննարկումներին»:

Թե որքանով այդ քննարկումները կազդեն ջավախահայության՝ լեզվին առնչվող խնդիրների վրա, պատասխանի համար դեռ պետք է սպասել, քանի որ որքան էլ այս հռչակագիրը կրկին մեջտեղ է բերվել, Վրաստանում շատերն են այն մեկնաբանում այնպես, թե հայերը կամ, ասենք, ադրբեջանցիները, ազգային փոքրամասնություն չեն Վրաստանում, ուստի լեզվի հարց բարձրացնել չեն կարող:

Վ. Պ.

# Միլիարդատիրոջ մոտ աշխատելը կարող է մի օր մարդուն դարձնել վարչապետ



Վրաստանն արդեն նոր վարչապետ ունի, որ ժամանակին նախկին վարչապետին պատկանող ընկերություններից մեկի աշխատակիցն էր: Նոյեմբերի 20-ին վրացական խորհրդարանը հաստատեց նորընտիր նախագահ Գեորգի Մարգվելաշվիլու ներկայացրած կառավարության կազմը, որից հետո էլ երեկ Վրաստանի նախագահը ստորագրել է Իրակլի Գարիբաշվիլուն վարչապետի պաշտոնում նշանակելու հրամանագիրը:

Գարիբաշվիլին, որ ծնվել է Թբիլիսիում 1982-ին, դպրոցական տարիներին եղել է Վրաստանի քիքբոքսինգի չեմպիոն, բայց իր ապագան շարունակել է՝ ավարտելով Վրաստանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Այդուհետեւ կրթությունը շարունակել է Եվրոպայում՝ ավարտելով Սորբոնի համալսարանը, որն էլ նրան հնարավորություն է ընձեռել դառնալու աշխատակից միլիարդատեր Բիձինա Իվանիշիլուն պատկանող ընկերություններից մեկում: 2011-ի հոկտեմբերից քաղաքական գործիչ ներկայացող միլիարդատիրոջ թիմում Գարիբաշվիլին առաջատար դիրքերում էր, որը նախորդ տարվա հոկտեմբերին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո փոխարինվեց ներքին գործերի նախարարի պաշտոնով:

Վրացական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ Գարիբաշվիլին արդեն ներկայացրել է իր ապագա աշխատանքի հիմնական կետերը, մասնավորապես, որ Վրաստանը առաջնահերթություն է տալիս Բաքու-Ախալքալաք-Կարս երկաթգծի շինարարությանը, վերանայելու է գրեթե 118 երկրների հետ ազատ անցագրային ռեժիմի կիրառությունը, հետեւողական է լինելու Եվրոմիության հետ միասնական օդային տարածքի հարցի կարգավորմանը եւ այլն:

Հայ-վրացական հարաբերությունների համատեքստում ինչ-որ փոփոխությունների ակնկալիքներ առայժմ չեն կարող լինել, առավել եւս, որ ինչպես Վրաստանի ներկայիս նախագահը, այնպես էլ վարչապետը, ինչպես ասում են, Իվանիշվիլու մարդիկ են, եւ ոնց վերջինս ասի, այդպես էլ կլինի: Ուղղակի հուսանք, որ սեփական ծագման հարցում հայկականության ստվերից անգամ վախեցած Սաակաշվիլուց հետո վրաց կառավարությունն ու իշխանություններն ընդհանրապես կկարողանան հայ-վրացական խնդիրներին մոտենալ կառուցողական դիրքորոշմամբ ու հարցերը լուծելու պատրաստակամությամբ:

Վ. Պ.

ՊԱԿԻՍՏԱՆ

# Ամերիկյան անօդաչու ինքնաթիռը հրթիռակոծել է պակիստանյան հոգեւոր դպրոց



**Նոյեմբերի 21-ի առավոտյան ամերիկյան անօդաչու ինքնաթիռներից մեկը Պակիստանի հյուսիսարեւմուտքում հարվածել է Խանգուի շրջանին: Օդային հարվածներից սպանվել է 6 մարդ, այդ թվում՝ 2 աֆղան գրոհային: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով Պակիստանի ՆԳՆ աղբյուրներ:**

**Վերջիններիս համաձայն, օդից արձակված հրթիռները պայթել են իսլամական դպրոցի տարածքում, երբ այնտեղ գտնվելիս են եղել «Թալիբան» շարժմանը մերձավոր աֆղանական «Խագանի» խմբավորման ներկայացուցիչներ:**

**Ավելի վաղ ԱՄՆ-ի իշխանությունները Պակիստանի կառավարությանը խոստացել էին օդային հարվածներ չհասցնել կառավարության հետ բանակցություններ սկսած պակիստանցի թալիբներին: Սակայն դրանց նախօրեին ամերիկյան օդուժի թիրախային գործողության հետեւանքով սպանվել էր «Թալիբանի» պակիստանյան առաջնորդ Հաքիմուլլա Մեհսուդը: Հաջորդ օրը թալիբները նոր առաջնորդ էին ընտրել Խան Սաիդին, բայց բանակցությունները դադարեցվել էին:**

**Անցյալ շաբաթ Պակիստանի ներքգործնախարար Չաուդխուրի Նիսար Ալի Խանը հայտարարեց, որ «Թալիբանի» հետ բանակցությունները հաջողության չեն հասցնի, քանի դեռ չեն դադարել անօդաչու ինքնաթիռների թռիչքները: Նա ամերիկացիներին մեղադրեց այն բանում, որ Մեհսուդին ոչնչացնելով՝ նրանք փորձել են ձախողել բանակցությունները:**

**Պակիստանի պաշտպանության նախարարության տվյալներով, վերջին հինգուկես տարում երկրի տարածքում ամերիկացիների օդային հարվածներից սպանվել է 2227 մարդ, այդ թվում՝ 67 խաղաղ բնակիչ: Պաշտոնական վիճակագրությունը հերքում են իրավապաշտպանները եւ լրատվամիջոցները՝ հայտարարելով, թե Պակիստանի իշխանությունները էապես նվազեցնում են զոհված խաղաղ բնակիչների թիվը:**

# Անգլիկան եկեղեցին կանանց թույլատրեց եպիսկոպոս ձեռնադրվել



**Անգլիկան եկեղեցու գլխավոր սինոդը ձայների գերակշիռ մեծամասնությամբ քվեարկել է կանանց եպիսկոպոսական պաշտոններ զբաղեցնելու օգտին, հաղորդում է «Գարդիան» թերթը:**

**Քվեարկությունից առաջ կայացած քննարկման ընթացքում պարզվել է, որ այդ որոշման երբեմնի մոլի հակառակորդները փոխել են իրենց տեսակետը: Դրա շնորհիվ կանանց իրավունքների ընդլայնման օգտին արտահայտվել են 378, դեմ՝ ընդամենը 8 պատգամավորներ: 25 մարդ ձեռնպահ է մնացել:**

**Նոր կանոնների նախկին հակառակորդներից շատերը հայտարարել են, որ դրանց հավանություն կտան հանուն սինոդում հաստատված համագործակցության ու միասնության ոգու պահպանման:**

**Ընդամենը 1 տարի առաջ նույն սինոդը կանանց եպիսկոպոսության արգելքը չէր կարողացել վերացնել հարցի քննարկմանը եւ քվեարկությանը մասնակցած աշխարհականների պահպանողական մասի հակազդեցության պատճառով: Մեկամյա վաղեմության որոշման վերանայումը դեռ չի նշանակում հարցի վերջնական լուծում, նշում է «Գարդիանը»: Տվյալ դրույթի վերջնական հաստատման համար անհրաժեշտ է 2014-ին անցկացնել սինոդի եւս մեկ քվեարկությանը, որի արդյունքները պետք է հաստատվեն Մեծ Բրիտանիայի խորհրդարանում:**

**«Ֆիգարո» թերթը հիշեցնում է, որ բրիտանացի կանայք հոգեւորական ձեռնադրվելու իրավունք ստացել էին 20 տարի առաջ:**

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Համերգ՝ նվիրված Ա. Խաչատրյանի 110-ամյակին




Մոսկվայի պետական կոնսերվատորիայի Մեծ դահլիճում նոյեմբերի 24-ին տեղի կունենա Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյան) համերգը՝ նվիրված Արամ Խաչատրյանի 110-ամյակին:

Համերգային ծրագրի մենակատարն է 2012թ. Եղիսաբեթ թագուհու անվան ջութակահարների միջազգային մրցույթի հաղթող, ռուս վիրտուոզ ջութակահար Անդրեյ Բարանովը:

Երեկոյի ընթացքում կհնչեն Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները Ջութակի կոնցերտը, Սպարտակի եւ Ֆրիգիայի ադաջոն «Սպարտակ» բալետից, Խաչատրյանի թիվ 2 սիմֆոնիան:

Նշենք, որ համերգային ծրագիրը իրականացվում է Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի նախաձեռնությամբ անցկացվող Արամ Խաչատրյանի անվան միջազգային փառատոնի շրջանակում:

Երիտասարդական նվագախմբի մոսկովյան համերգով կեզրափակվի միջազգային փառատոնն արտասահմանում, ինչպես նաեւ այն կդառնա Մոսկվայի կոնսերվատորիայի 150-ամյակին նվիրված ԱՊՀ անդամ երկրների նվագախմբերի շքերթի վերջին ակորդը:

Համերգը տեղի կունենա ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ, իսկ գլխավոր հովանավորն է «Մոնարխ» ընկերությունների խումբը, ավիափոխադրման հովանավորը «Էյր Արմենիա» ընկերությունը:

Երեկոյի կազմակերպիչներն են Մոսկվայի պետական կոնսերվատորիան եւ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը:

**Ս. Հ.**

# «Ներկայի վերականգնումը»

Մշակույթի նախարարությունը եւ Ազգային թատերական ստեղծագործական միավորումը, համագործակցությամբ Գրողների միության, «Գրական թերթի» եւ «Դրամատուրգիա» հանդեսի, 2013 թ. նոյեմբերի 15-25-ը հայտարարում են «Ներկայի վերականգնումը» դրամատուրգիական ընթերցումների հայտերի ընդունում: Հայտը պետք է ընդգրկի հեղինակի համառոտ բնութագիրը, կապի տվյալները եւ դրամատիկական երկի տպագիր եւ էլեկտրոնային տարբերակները:

Հայտերն ընդունվում են Ազգային թատերական ստեղծագործական միավորման գրասենյակում (Սայաթ-Նովա 4 Հովհ. Թումանյանի անվ. պետական տիկնիկային թատրոն): Նշենք, որ հայտերի ընդունման հանձնախմբի անդամներն են Հովհ. Թումանյանի անվ. պետական տիկնիկային թատրոնի տնօրեն, ԵԹԿՊԻ դերասանի վարպետության եւ ռեժիսուրայի ամբիոնի վարիչ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Բաբայանը, «Դրամատուրգիա» հանդեսի եւ «Գրական թերթի» խմբագիր դրամատուրգ Կարինե Խոդիկյանը, Ե. Չարենցի անվ. Գրականության եւ արվեստի թանգարանի փոխտնօրեն Գուրգեն Գասպարյանը:

Մրցույթին հաղթած պիեսները կներկայացվեն 2013 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ը Հովհ. Թումանյանի անվ. տիկնիկային թատրոնի փոքր դահլիճում: Հեղինակային ընթերցումների տեւողությունն է առավելագույնը 40 րոպե, իսկ հրապարակային քննարկումներինը առավելագույնը 20 րոպե:

**Ս. Հ.**

# Միրզոյան քառյակը կնվագի «Տաթեւեր»-ով «թռչելով»

Բրիտանացի երգահան Բենջամեն Բրիտենի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ «Տաթեւեր» ճոպանուղում բացառիկ համերգ տեղի կունենա:

Այսօր, նոյեմբերի 22-ին, Հալիձորից Տաթեւ «թռչելիս»՝ «Միրզոյան քառյակը» կկատարի Բենջամեն Բրիտենի Simple Symphony ստեղծագործությունը:

Կատարման ուղիղ հեռարձակմանը կարող եք հետեւել նոյեմբերի 22-ին ժամը 16.00-ին Ա1+-ի կայքում:

1965 թվականին Բենջամին Բրիտենը ժամանել էր Հայաստան՝ հանգստանալու Դիլիջանի կոմպոզիտորների միության ստեղծագործական տանը: Այդ ժամանակ Դիլիջանում էին հանգստանում նաեւ թավջութակահար Մստիսլավ Ռոստրոպովիչը տիկնոջ՝ օպերային երգչուհի Գալինա Վիշնեւսկայայի հետ: Այդ օրերին Էդվարդ Միրզոյանի ջանքերի շնորհիվ կազմակերպվեց «Հայաստանում Բրիտենի օրեր» փառատոնը:

Այսօր, կայանալիք «թռչող համերգի» կազմակերպիչներն են Հայաստանում Բրիտանական խորհուրդը եւ «Տաթեւեր» ճոպանուղին:

# «Կամարը» հայ գրքի ու գրադարանների ճակատագրի մտահոգությամբ

Մի քանի տարի առաջ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում, ծառի բնի մոտ կուտակված գրքերը ապշեցուցիչ տպավորություն թողեցին: Որպես անպետքական իրեր՝ դրանք դուրս էին նետվել. մարդը չէր էլ ջանացել վերնիսաժի հնագրավաճառներին մոտենալ, միանգամից փողոց էր նետել: Սա հիշեցի՝ Բեյրութում լույս տեսնող «Կամար» հանդեսի վերջին համարի խմբագրականը կարդալիս, որտեղ նկարագրածը ավելի ցավեցնող ու ավելի մտահոգեցնող է:




«Հայկական վարժարանի մը տնօրէնին «տնօրինումով» դպրոցի գրադարանէն դուրս կը շպրտուին (բառին ամբողջական իմաստով) «աւելորդ» գիրքեր, աշակերտներուն անմատչելի գիրքեր: Այդ գիրքերը դպրոցի շրջափակէն կը տեղափոխուին հանդիպակաց փողոցը գտնուող աղբի տակառները... : Ի դէպ, դպրոցին հարեւանակից են բազմաթիւ հայ ընտանիքներ, որոնք իրենց աղբերուն համար կ՚օգտագործեն նոյն տակառները... »:

Կարելի է մտածել, թե ուրեմն որքան անպետքական գրքեր են եղել դրանք: Սակայն անունները թվարկելուց հետո անհավանական է թվում, ավելին, երբ խոսքը վերաբերում է հայկական դպրոցի գրադարանին՝ Կորյուն «Վարք Մաշտոցի», Բուզանդ «Պատմութիւն հայոց», Սայաթ-Նովա, Մեսրոպ Թաղիադյան, Միքայել Նալբանդյան, Պերճ Պռոշյան, ավելին՝ Հր. Աճառյան, Հակոբ Մանանդյան, Դ. Դեմիրճյան, Ս. Կապուտիկյան, Հր. Քոչար եւ դեռ ավելին՝ Վիլյամ Սարոյան, Էռնեստ Հեմինգուեյ: Ինչ մտածողություն ու բարոյականություն պետք է ընկած լինի այսպիսի երեւույթի խորքում: Անգամ եթե այդ գրքերը չափից ավելի մաշված եւ այլեւս անգործածական լինեին (թեեւ այդպես չի եղել), սա կատարյալ արհամարհանք է գրքի, մշակույթի հանդեպ ընդհանրապես:

Երկրորդ դրվագում մասնավոր մի գրքի ճակատագրի մասին է խոսվում (Էժեն Սյու «Գաղտնիք Փարիզի», 1868 թ. թարգմ.՝ Մաստթեոս Մամուրյան). թափառական կյանք ունեցած գիրքը հայտնվել է Բեյրութում հայտնի «կիրակնօրյա շուկայում»՝ կուսակցություններից մեկին պատկանող մշակութային միության կնիքը վրան: Խնդրահարույցը կամ մտահոգիչը սակայն այլ է. «Եթե գիրքին մինչեւ Պէյրութ ժամանումը բնական հոլովոյթ մը կարելի է նկատել, անբնականն անոր միութենապատկան գրադարանէն «կիրակնօրեայ շուկայ» հասնիլն է... Եթե պարագան վերաբերէր միակ գիրքի մը, հնարաւոր կ՚ըլլար տալ զանազան արդարացուցիչ պատճառներ: Սակայն, երբ բազմաթիւ գիրքեր կը կրեն նոյն կնիքը գործող միեւնոյն մշակութային միութեան, կը մղուինք մտածելու յոռեգոյնի մասին»: Այստեղից էլ՝ հրապարակախոսական հարցը՝ «Ինչ պիտի ըլլայ ճակատագիրը հայ գիրքին ու հայկական գրադարաններուն... »:

Հաջորդող էջերում «Կամարը» շարունակում է իր առաքելությունը՝ հնարավորինս ամբողջական ներկայացնել հայ գրականության ընթացիկ վիճակը՝ սփյուռքի եւ հայաստանյան գրողների նոր գործերի տպագրությամբ (չնայած հեղինակային կազմի ընտրությունը համարից համար շատ չի փոխվում կարծես):

Հանդեսի գեղարվեստական գրականության բաժնի էջերը տրամադրված են Նորայր Ադալյանին, Սարգիս Կիրակոսյանին, Վաչե Պետրոսյանին, Գառնիկ Գալստյանին, Պերճուհի Ավետյանին, Խաչիկ Տետեյանին, Թամար Հովհաննիսյանին, Արա Արծրունուն, Էլդա Գրինին, Խաչիկ Խաչերին, Հակոբ Ադամյանին:

Նորայր Ադալյանի՝ արտագնա աշխատանքի մեկնելու պատրաստ հերոսուհին եւ նրա կյանքը ներկայացված են կիսաիրոնիկ, ինչ-որ տեղ երգիծական երանգներով, խորքում, սակայն, մերօրյա իրականության դրամատիկ վիճակների ճշմարիտ արտացոլանքն է: Ընտանիքը աղքատության ճիրաններից՝ իմա քայքայվելուց փրկելու ելքը շատ հայ կանայք համարում են հարեւան երկրներ առեւտրի մեկնելու ճանապարհը: Իսկ որոշները նրանցից կամ հետ չեն վերադառնում կամ ապրուստ վաստակելու այլ ճանապարհ են ընտրում, ինչպես Ն. Ադալյանի «Դուբայ» պատմվածքի նախկին գյուղաբնակ երիտասարդ կինը: Հայ ընտանիքներին համակած այս աղետը չնայած գրողը ներկայացրել է հումորի նուրբ շղարշի ներքո, ինչ-որ տեղ խղճահարություն առաջացնող, սակայն արտագաղթի հետեւանք իսպառ քայքայված իրական կյանքի վիճակը մարդկային ողբերգության անսպասելի ավարտ է գուժում: «Գյուղն ամայի էր: Մի սեւ շուն տեսա, կարծես ճակատագրի սեւ շունը լիներ: Նայելով շան աչքերին, Արփին հասկացավ, որ մայրը վաղուց չկար, իսկ Մկոյին զորակոչել են բանակ, եւ նա սահմանամերձ ռազմաճակատում ընկել է թշնամու թե բարեկամի գնդակից»:

Հոգեբանական բավականին լարված վիճակ է ապրում Խաչիկ Խաչերի «Մի անիմաստ երեկոյ» պատմվածքի հերոսը՝ փողոցում ընկած տոպրակի անհայտ պարունակության հանդեպ ունեցած հետաքրքրությունից եւ դրա հետեւանք՝ մտային տագնապներից եւ ներքին խուճապից:

Մտավորական ընտանիքի կյանքային փոքր էպիզոդը հոգեբանական, զգացական աշխարհի, սկզբունքների ու բարոյականության շերտեր է բացում Էլդա Գրինի «Սոխարցունքներ» գողտրիկ պատմվածքում:

Իսկ Թամար Հովհաննիսյանի «Հոգու առագաստներ» շարքի բանաստեղծությունները կանացի անպաշտպան հոգեվիճակի արտահայտություններ են՝ ապրածի ու անցածի չընթերցված աղերսներ, ափսոսանքի, լռության, սպասման, որ չի մասնում իրեն երբեք, եւ չի սպառվում զարմանալիորեն երբեք, սիրո պարտեզների հորինված պատրանքի պես ...

*... Եվ շալակած*
*բեռն ուսերիս,*
*Տենչացի սէր եւ*
*արեւ տենչացի,*
*Բայց ստուերայոյս*
*իրիկնապահին*
*Կարօտ հնձեցի ու*
*աստղերի լաց:*

«Գրականագիտական» բաժնում ներկայացված է Երվանդ Տեր-Խաչատրյանի ծավալուն գրախոսությունը՝ բեյրութահայ բանաստեղծ Պեպո Սիմոնյանի գրական անցած ուղուն, բանաստեղծական ժառանգությանը նվիրված, որ խոսք է նաեւ գրողի մարդկային-մտավորական կերպարի, սփյուռքահայ համայնքում նրա վաստակի գնահատման: Գրականագետը, հեղինակի յուրաքանչյուր ժողովածուի հանդեպ ցուցաբերելով առանձին մոտեցում, անդրադառնում է ստեղծագործական ներքին փոփոխություններին՝ իրերի, երեւույթների իմաստակիր ու խորհրդավոր աշխարհի բանաստեղծական ներթափանցումներին, չափածո խոսքի կշռույթին, կառուցվածքային դրսեւորումներին, թեմատիկ բազմազանությանը, հեղինակի գրչին հատուկ մերթ հրապարակախոսական, մերթ խոհափիլիսոփայական, մերթ ռոմանտիկ-քնարական շնչին: «Կարեւոր հանգամանք է, որ Պեպօ Սիմոնեանը մշակել է բանաստեղծութեան իր արտայայտչաձեւը, որ դասական բանաստեղծական մտածողութեան եւ տողարձակ ազատ կերպի համադրումն է՝ ներքին կշռոյթով, բանաստեղծութեան տողերը առաջ տանող ուժականութեամբ եւ տեղ-տեղ էլ ռոմանտիկական բանաստեղծութեանը բնորոշ բարձրաշունչ ու բարձրահունչ ոգումներով»:

Սիամանթոյի կենսագրական նոր, հետաքրքրական էջեր է ներկայացնում Նարինե Թուխիկյանը:

«Գեղանկարչություն» բաժնում անդրադարձ է արված քանդակագործ Զավեն Խտըշյանի (Ժոզեֆ Թարրապ) եւ գեղանկարչուհի Լենա Այտնյանի (Տուհա Ապտել Ռաուֆ Ալ-Մոլ) ստեղծագործություններին:

Տեղեկատվական անդրադարձներ կան նաեւ ընթացիկ գրական-մշակութային կարեւոր նկատված իրադարձություններին եւ նոր հրատարակություններին (Վահրամ Մավյանի մահվան 30-ամյակի նշում, արաբերենով լույս տեսած «Մեր բանաստեղծները. Հայաստանի փառքը կերտողները» ժողովածուի շնորհանդես, Աբրահամ Ալիֆյանի հիշատակի ոգեկոչման երեկո եւ այլ):

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

Բարսելոնում Լիոնել Մեսիին է հանձնվել «Ոսկե խաղակոշիկ» մրցանակը, որին արգենտինացի ֆուտբոլիստն արժանացել էր նախորդ մրցաշրջանում եվրոպական առաջնություններում ամենաբարձր արդյունավետությամբ աչքի ընկնելու համար: Հիշեցնենք, որ Իսպանիայի նախորդ առաջնությունում Մեսին «Բարսելոնի» կազմում 46 գոլի հեղինակ էր դարձել: Ընդորում նրան հաջողվել էր գրավել «Բարսելոնի» բոլոր 19 մրցակիցների դարպասները:

# Լիոնել Մեսին «Ոսկե խաղակոշիկի» եռակի դափնեկիր




Լիոնել Մեսին դարձավ միակ ֆուտբոլիստը, որը 3 անգամ արժանացել է «Ոսկե խաղակոշիկին»: Պարգեւատրումից հետո Մեսին շնորհակալություն է հայտնել խաղընկերներին. «Այս մրցանակը նվիրում եմ բոլոր նրանց, որոնք սիրում են ինձ եւ դժվարին պահերին աջակցում են: Նրանց թվում են իմ խաղընկերները, առանց որոնց հնարավոր չէր լինի շահել այս մրցանակը: Առայժմ հստակ չեմ կարող ասել, թե վնասվածքից երբ կապաքինվեմ: Կվերադառնամ, երբ ամեն ինչ նորմալ կլինի եւ կաշխատեմ, որպեսզի ապագայում խուսափեմ վնասվածքներից»:

Առաջին անգամ Մեսին «Ոսկե խաղակոշիկի» դափնեկիր էր դարձել 2010-ին՝ խփելով 34 գնդակ: Անցյալ տարի նա մրցանակին տիրեց՝ իր օգտին ունենալով 50 խփած գնդակ:

«Ոսկե խաղակոշիկ» մրցանակը սահմանվել է 1968-ին ֆրանսիական հանրահայտ «Էկիպ» հանդեսի եւ «Ադիդաս» ընկերության կողմից: Այն հանձնվում էր եվրոպական երկրների առաջնություններում բոլորից շատ գոլեր խփած ֆուտբոլիստին: Մրցանակի առաջին դափնեկիրը պորտուգալացի հանրաճանաչ ֆուտբոլիստ Էյսեբիոն էր, որը «Բենֆիկայում» 42 գոլ էր խփել: 1973-ին նա 2-րդ անգամ դարձավ մրցանակի դափնեկիր՝ խփելով 40 գոլ:

Պատվավոր մրցանակը 2 անգամ նվաճել է նաեւ գերմանացի նշանավոր ռմբարկու Գերդ Մյուլլերը, որը հանդես էր գալիս Մյունխենի «Բավարիայում» (1970-ին՝ 38 գոլ, 1972-ին՝ 40):

Հետագա տարիներին մրցանակն աստիճանաբար հեղինակազրկվեց, քանի որ որոշ երկրներում պայմանավորված խաղերի արդյունքում ռմբարկուների ցուցանիշներն արհեստականորեն բարձրացվեցին: Դա էր պատճառը, որ առանձին տարիների մրցանակը նվաճեցին այն ժամանակ ֆուտբոլային ոչ այնքան ուժեղ առաջնություններ ունեցող երկրների ֆուտբոլիստներ: Օրինակ, 1987-ին մրցանակը հանձնվել էր Բուխարեստի «Դինամոյի» հարձակվող Ռոդիոն Կեմետարուին, որը խփել էր բոլորից շատ՝ 44 գնդակ: Սակայն հետագայում պարզվել էր, որ նա մի շարք գոլեր խփել է պայմանավորված խաղերում: Ուստի Կեմետարուին զրկեցին մրցանակից:

Այս ամենի հետեւանքով մրցանակի հիմնադիրները 1992-ից որոշեցին դադարեցնել մրցանակաբաշխությունը: Եթե այն խաղարկվեր, ապա 1995-ին «Ոսկե խաղակոշիկը» կստանար Երեւանի ՀՄԸՄ-ի հարձակվող Արսեն Ավետիսյանը, որը 1994-ի Հայաստանի առաջնությունում 39 գոլ էր խփել:

1997-ին մարզական հրատարակությունների եվրոպական միությունը որոշեց վերսկսել «Ոսկե խաղակոշիկի» մրցանակաբաշխությունը՝ փոփոխելով մրցանակի կանոնակարգը: Հաղթողը որոշվելու էր ոչ թե խփած գնդակների քանակով, այլ վաստակած միավորներով (գոլերի քանակը բազմապատկած տվյալ երկրի առաջնության համար սահմանված գործակցով): Որոշվեց եվրոպական երկրների առաջնությունները դասակարգել: Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի եւ Ֆրանսիայի առաջնությունների համար սահմանվեց 2 գործակից, ինչը նշանակում էր, որ դրանցում ֆուտբոլիստների խփած գոլերը կրկնապատկվելու են: Մի շարք երկրների համար գործակիցը 1,5 է, իսկ ավելի թույլ մակարդակ ունեցող երկրների, այդ թվում նաեւ ՀՀ առաջնության համար, սահմանվել է 1 գործակից:

Նոր մրցակարգով խաղարկվող մրցանակի առաջին դափնեկիրը Ռոնալդոն էր, որը 1996/97-ի առաջնությունում «Բարսելոնում» 34 գոլի հեղինակ էր դարձել՝ վաստակելով 68 միավոր: 1997-2013-ին մրցանակը 2-ական անգամ նվաճել են բրազիլացի Մարիո Ժարդելը (1999, 2002-ին), ֆրանսիացի Թյերի Անրին (2004-2005-ին), ուրուգվայցի Դիեգո Ֆոռլանը (2005,2009-ին) եւ պորտուգալացի Քրիշտիանու Ռոնալդուն (2008, 2011-ին):

Ի դեպ, Ռոնալդուն ներկայումս գլխավորում է «Ոսկե խաղակոշիկ» մրցանակի ընթացիկ խաղարկության հավակնորդների ցանկը: Նա Իսպանիայի առաջնությունում 16 գոլ է խփել եւ 32 միավոր վաստակել: Լիոնել Մեսին վնասվածքի պատճառով խաղադաշտ դուրս չի գալիս եւ առայժմ 8 գոլ է խփել: Ինչ խոսք, մրցանակի դափնեկիր դառնալու Ռոնալդուի հնարավորությունները անհամեմատ մեծ են, մանավանդ որ նա աչքի է ընկնում բարձր արդյունավետությամբ:

## Տեր-Սահակյանն ընդգրկվեց առաջատարների խմբում

**Չեննայի շախմատի մրցաշարի 8-րդ տուրում Սամվել Տեր-Սահակյանը հաղթելով Թեջա Ռավիին, վաստակեց 5,5 միավոր: Դա լավագույն արդյունքն է հայ շախմատիստների մեջ: 5-ական միավոր են վաստակել Լեւոն Բաբուջյանը, Տիգրան Ս. Պետրոսյանը, Հովիկ Հայրապետյանն ու Կարինա Համբարձումովան: Բաբուջյանը պարտվեց Միշրա Սվայամսին: Պետրոսյանն ու Հայրապետյանը հաղթեցին, իսկ Համբարձումովան հաշտություն կնքեց մրցակցի հետ: 4,5 միավոր ունի Վահե Բաղդասարյանը, 2,5՝ Մարիա Գեւորգյանը:**

**Աղյուսակը 7 միավորով շարունակում է գլխավորել ռուսաստանցի Միխայիլ Մոժարովը, որից կես միավորով հետ են մնում հնդիկ 3 շախմատիստներ:**

## Անհաջողությունները հետապնդում են Սեւյանին

**Բուդապեշտում ընթացող շախմատի մրցաշարում առայժմ անհաջող է հանդես գալիս 13-ամյա ամերիկահայ, ՖԻԴԵ-ի վարպետ Սամուել Սեւյանը: 5-րդ տուրում նա 3-րդ անընդմեջ պարտությունը կրեց ամերիկացի 15-ամյա միջազգային վարպետ Կայդեն Տրոֆի հետ մրցախաղում: 5 տուրից հետո Սեւյանը 1 միավոր է վաստակել: Առաջատարը Իմրե Բալոգն է, որն ունի 3,5 միավոր:**

## Մրցախաղի ելքը գործնականում վճռվեց

**Մագնուս Կառլսենը գործնականում վճռեց Վիշվանաթան Անանդի հետ աշխարհի առաջնության եզրափակիչ մրցախաղի ելքը՝ 9-րդ պարտիայում հաղթանակ տոնելով 29-րդ քայլին: Դա Կառլսենի 3-րդ հաղթանակն էր: Նա առջեւում է 6-3 հաշվով:**

**Շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար Կառլսենին բավական է այսօր կայանալիք մրցախաղի 10-րդ պարտիան ավարտել ոչ-ոքի: Նորվեգացի գրոսմայստերը խաղալու է սպիտակներով:**



# Մխիթարյանն աշխարհի առաջնության չմեկնող ֆուտբոլիստների խորհրդանշական հավաքականում է

**Այս օրերին տարբեր լրատվամիջոցներ կազմել են ֆուտբոլի աշխարհի 2014-ի առաջնության չմեկնող ֆուտբոլիստների խորհրդանշական հավաքականը: ՀՀ հավաքականի եւ Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանն ընդգրկվել է 101greatgoals-ի եւ ESPN-ի կազմած տարբերակներում:**

**1-ին տարբերակում խորհրդանշական հավաքականի կազմն այսպիսին է. Պետր Չեխ (Չեխիա, «Չելսի»), Դավիթ Ալաբա (Ավստրիա, «Բավարիա»), Նեւեն Սուբոտիչ (Սերբիա, «Բորուսիա» Դ.), Դանիել Ագեր (Դանիա, «Լիվերպուլ»), Բրանիսլավ Իվանովիչ (Սերբիա, «Չելսի»), Հենրիխ Մխիթարյան (Հայաստան, «Բորուսիա» Դ.), Աարոն Ռեմզի (Ուելս, «Արսենալ»), Գարեթ Բեյլ (Ուելս, «Ռեալ» Մ.), Մոհամեդ Աբուտրիկա (Եգիպտոս, «Բանի»), Ռոբերտ Լեւանդովսկի (Լեհաստան, «Բորուսիա» Դ.), Զլատան Իբրահիմովիչ (Շվեդիա, ՊՍԺ):**




**2-րդ տարբերակում միայն 2 փոփոխություն կա 1-ի համեմատ: Աարոն Ռեմզիի եւ Մոհամեդ Աբուտրիկայի փոխարեն խորհրդանշական հավաքականում ընդգրկվել են «Ատլետիկոյի» թուրք խաղացող Արդա Թուրանը եւ «Նապոլիի» սլովակ կիսապաշտպան Համշիկը:**

## «Ուրալը» հետաքրքրված է Վարդան Մինասյանով

**ՀՀ ազգային հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի ծառայություններով հետաքրքրված է նաեւ Եկատերինբուրգի «Ուրալը»: Այս մասին armsport.am-ին տեղեկացրել է Մինասյանի գործակալ Արկադի Վասիլյանը:**

**Ինչպես հայտնել էինք, ղազախական «Սպարտակի» ղեկավարությունն էլ ցանկանում է թիմի ղեկը վստահել Մինասյանին: Վերջինս մոտ օրերս կստանա «ՊՐՈ» կարգի մարզչական արտոնագիր:**

**«Ուրալը» ՌԴ առաջնությունում 14 միավորով 14-րդ տեղում է: Հիշեցնենք, որ այս թիմում են խաղում Էդգար Մանուչարյանը, Արթուր Սարկիսովն ու Դենիս Թումասյանը:**

## Նալբանդյանը մասնակցեց ցուցադրական մրցաշարին

**Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանը մասնակցել է Չիլիի Սանտյագո քաղաքում անցկացված թենիսի ցուցադրական մրցաշարին: Նա երկու խաղափուլում պարտվել է չիլիացի Նիկոլաս Մասուին (4-6, 2-6): Մյուս մրցախաղում աշխարհի 2-րդ ռակետ Նովակ Ջոկովիչը հաղթել է իսպանացի Ռաֆայել Նադալին (7-6, 6-4):**

## Վերջին մասնակիցն Ուրուգվայի հավաքականն է

Անցումային պատասխան խաղում ոչ-ոքի խաղալով Հորդանանի հավաքականի հետ, Ուրուգվայի ընտրանին դարձավ 2014-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի վերջին՝ 32-րդ մասնակիցը:

Եվ այսպես, Եվրոպան Բրազիլիայում կներկայացնեն Հոլանդիայի, Իտալիայի, Իսպանիայի, Անգլիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Բելգիայի, Բոսնիայի, Հունաստանի եւ Խորվաթիայի հավաքականները:

Հարավային Ամերիկայից աշխարհի առաջնությունում հանդես կգան 6 երկրների հավաքականներ՝ Բրազիլիան, Արգենտինան, Կոլումբիան, Չիլին, Էկվադորը եւ Ուրուգվայը:

Ասիան կներկայացնեն Ավստրալիան, Իրանը, Ճապոնիան եւ Հարավային Կորեան:

Աֆրիկյան մայրցամաքից ուղեգիր են նվաճել Նիգերիան, Կամերունը, Ալժիրը, Գանան եւ Կոտ դ՛Իվուարը:

ԿՈՆԿԱԿԱՖ-ի գոտուց աշխարհի առաջնության մասնակիցներն են ԱՄՆ-ը, Կոստա Ռիկան, Հոնդուրասն ու Մեքսիկան:

Ուրուգվայի հավաքականը 12-րդ անգամ է մասնակցելու աշխարհի առաջնությանը: Ուրուգվայցիները 2 անգամ՝ 1930-ին եւ 1950-ին նվաճել են աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Միակ հավաքականը, որը մասնակցել է աշխարհի բոլոր 20 առաջնություններին՝ Բրազիլիան է: Գերմանիան եւ Իտալիան հանդես են եկել 18 առաջնություններում, Արգենտինան՝ 16, Մեքսիկան՝ 15: 14-ական անգամ աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկել են Իսպանիայի եւ Անգլիայի հավաքականները: Իսկ ահա Բոսնիայի ընտրանին 2014-ին նշելու է նորամուտն աշխարհի առաջնություններում: Նա եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճեց 5-րդ փորձից:

1954-ից սկսած Գերմանիայի ընտրանին աշխարհի առաջնության անփոփոխ մասնակից է: Իտալացիները 1962-ից են անընդմեջ ուղեգիր նվաճում: Արգենտինայի հավաքականին մշտապես հաջողությունն ուղեկցել է 1974-ից, իսկ իսպանացիներին՝ 1978-ից:

2014-ի աշխարհի առաջնության ուղեգիր նվաճած հավաքականներից 8-ը՝ Ռուսաստանը, Բելգիան, Խորվաթիան, Բոսնիան, Կոլումբիան, Էկվադորը, Իրանը եւ Կոստա Ռիկան չեն մասնակցել 2010-ին Հարավաֆրիկյան Հանրապետությունում տեղի ունեցած ֆուտբոլի համաշխարհային ստուգատեսին:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ



# Որտե՞ղ էր Լուկաշենկոն Բաքվում

1-ին էջից

Մինչ այդ Լուկաշենկոն Բաքվում երկու անգամ է եղել եւ «հյուրանոցում չի ապրել, եղել է նախագահական ընտանիքի մտերիմ հյուրը»,- բազմանշանակ գրել է «Թուրան» գործակալությունը՝ հավանաբար ակնարկելով մի քանի տարի առաջ իտալական մամուլում տարածված ասեկոսեն, որ «Բելառուսի նախագահ Լուկաշենկոն սիրավեպ ունի Ադրբեջանի առաջին տիկին Մեհրիբան Ալիեւայի հետ»:

Նոյեմբերի 20-ի ուշ երեկոյան Իլհամ Ալիեւը եւ Ալեքսանդր Լուկաշենկոն ներկա են գտնվել Բաքվում Բելառուսի դեսպանության շենքի բացման արարողությանը: Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքը որեւէ այլ մանրամասնություն չի փոխանցել: Երեկ առավոտյան, սակայն, ադրբեջանական լրատվամիջոցները, նկատի ունենալով, որ Բաքվում երթեւեկությունը խճողվել է Բիբիհեյբաթ ավանից դեպի քաղաքի կենտրոն տանող ճանապարհին, ենթադրություն արեցին, թե «Լուկաշենկոն, ըստ երեւույթին, գիշերն անցկացրել է Ադրբեջանի նախագահի մերձքաղաքային նստավայրում, այլ ոչ թե նրա անձնական հարկի տակ»:



Հին հանդիպումներից

Այս ամենը կարող էր թողնել կենցաղային բամբասախոսության տպավորություն, եթե աչքի չզարներ, որ երեկ մինչեւ ժամը 15-ը ադրբեջանական մամուլը ոչ մի կերպ չէր մեկնաբանում Բելառուսի նախագահի Բաքու կատարած անսպասելի այցը: Կարելի էր տպավորություն ունենալ, թե Բաքվում Բելառուսի դեսպանատան բացմանը մասնակցելուց հետո գիշերը Լուկաշենկոն թռել է Մինսկ:

Մինչդեռ երեկ օրվա երկրորդ կեսին Բաքվի լրատվամիջոցները «կեսբերան» հաղորդեցին, որ կայացել է նախագահների ոչ միայն դեմ առ դեմ, այլեւ պատվիրակությունների հետ հանդիպում: Տեղեկացվել է նաեւ, որ «հանդիպման ավարտին նախագահները հանդես են եկել ճառով», բայց թե ինչ են ասել՝ չի հրապարակվել: Հայտնի է դարձել միայն, որ հանդիպումների ընթացքում ընդգծվել է «երկկողմ հարաբերությունների դինամիկան, վստահություն է հայտնվել, որ Բելառուսի նախագահի այցը կծառայի դրանց հետագա զարգացմանը»:

Ոչինչ արտառոց, ինչպես տեսնում ենք, տեղի չի ունեցել: Այդուհանդերձ, ուշադրություն է հայցում այն, որ Բելառուսի նախագահի Բաքվում գտնվելու ժամերին Միացյալ Նահանգներում Ադրբեջանի դեսպան Էլին Սուլեյմանովը հանդես է եկել Եվրոմիության հետ իր երկրի հարաբերությունների հեռանկարի մասին խիստ ուշագրավ հայտարարությամբ:

Ըստ Սուլեյմանովի՝ Եվրոմիության հետ Ադրբեջանի հարաբերություններում առկա են «չճշգրտված հարցեր»: Դրանց շարքում ադրբեջանցի դիվանագետը հատուկ ընդգծել է «Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցում ԵՄ դիրքորոշումը»: Ասվածը կարելի է հասկանալ այն իմաստով, որ ԵՄ Արեւելյան գործընկերության Վիլնյուսի գագաթաժողովի նախօրեին պաշտոնական Բաքուն «խռովածի» տեսք է ընդունում՝ պատճառ բերելով Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» հարցում Բրյուսելի վերաբերմունքը «ճշգրտելու անհրաժեշտությունը»: Ավելի վաղ Իլհամ Ալիեւի աշխատակազմից ծանուցվել էր, որ Վիլնյուսի գագաթաժողովին «մասնակցության ձեւաչափը քննարկվում է»:

Երբ անցյալ օգոստոսին Բաքվում էր ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, հետեւեց տեղեկատվություն, թե «նախագահների դեմ առ դեմ բանակցությունները տեւել են ոչ պակաս, քան 7 ժամ»: Ընդսմին, Իլհամ Ալիեւը ՌԴ նախագահին ընդունել էր նաեւ սեփական հարկի տակ՝ թեյասեղանի շուրջը:

Բաքվում Բելառուսի նախագահի նախանցյալ օրվա եւ երեկվա «չարաճճիությունները» հնարավո՞ր է դիտարկել Եվրոմիությունից Ադրբեջանի «նեղսրտվածության» համատեքստում: Մանավանդ որ, դատելով տեղեկատվությունից, Ալեքսանդր Լուկաշենկոն Ադրբեջան է ուղեւորվել առանց մշտական ուղեկցի՝ Կոլյա որդու ընկերակցության:

ՁԱԽՈՂՎԱԾ ԱԶԱՏԱԳՐՈՒՄՆ ՏԻՄՈՇԵՆԿՈՅԻ

# Ծնկեց նաեւ Ուկրաինան...

1-ին էջից

**Վիլնյուսում Ուկրաինայի հետ համաձայնագիր ստորագրելու անհավանականության մասին էին վկայում նաեւ վերջին շրջանի զարգացումները, երբ Ուկրաինան ուղղակիորեն ԵՄ-ին փորձեց հասկացնել, որ նախընտրում է ֆինանսական զգալի միջոցների տեսքով օժանդակություն ստանալ այդ նույն համաձայնագիրը ստորագրելու դիմաց: Ուստի պատահական չէ, որ ուկրաինական Ռադայի ձախողումից էլ առաջ Ուկրաինայի ամենամոտ հարեւաններից Լեհաստանի արտգործնախարար Ռոդիսլավ Սիկորսկին Ուկրաինայի կողմից ԵՄ պահանջների բավարարման հավանականությունը պակաս, քան 50 տոկոս էր գնահատել արդեն նոյեմբերի 20-ին:**

**Այս համատեքստում հետաքրքրական է, որ երեկ մի շարք ռուսաստանյան եւ ուկրաինական լրատվամիջոցներ, հղում անելով իրենց աղբյուրներին (որ ավելի հավանական է՝ եղել է մեկը, միայն մեկ լրատվամիջոցի դեպքում, բայց դարձել բոլորի սեփականությունը-Վ.Պ.), խորհրդարանական ձախողումից անմիջապես հետո տարածեցին տեղեկատվություն, թե Ուկրաինայի նախագահը ԵՄ հարեւանության եւ ընդլայնման հանձնակատար Շտեֆան Ֆյուլեին ասել է, թե Վիլնյուսում չի պատրաստվում ստորագրել Ասոցիացման համաձայնագիրը:**

**Այս տեղեկատվության ճշմարտացիության օգտին փաստարկ էր նաեւ այն հանգամանքը, որ երեկվա խորհրդարանական քննարկումներում ուկրաինական իշխանությունը ներկայացնող կուսակցությունների պատգամավորները չէին մասնակցել այդ իսկ պատճառով չընդունված օրինագծերի քվեարկությանը:**

**Ուկրաինան ոչինչ էլ չէր ստորագրի, հատկապես եթե հիշենք, որ երեկվա խորհրդարանական քննարկումներից առաջ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, ոչ ավել, ոչ պակաս, խոսում էր Եվրոմիության ու Ուկրաինայի հետ «եռակողմ բանակցություններ» վարելու պատրաստակամության մասին: Ընդ որում, այդ «եռակողմ» ձեւաչափն, ըստ Պուտինի, առաջարկվել է Ուկրաինայի նախագահի կողմից, թեեւ «Ռուսաստանի համար դժվար է արդեն իսկ բանակցված հարցերի վերաբերյալ բանակցությունների մասնակցել»:**

**Փաստացի պաշտոնական Բրյուսելի զգուշացումները, թե Ասոցիացման համաձայնագրի ստորագրումը կախված է Տիմոշենկոյի գործից, արդյունք չտվեցին, հատկապես եթե հաշվի առնենք, որ համաձայնագրի ստորագրման հետաձգումը որեւէ որոշակի ժամկետի չի վերաբերում: Հնարավոր է, որ հետաձգումը նշանակի հրաժարում ստորագրումից, եթե շարունակվեն այն գործընթացները, որոնք այժմ էլ ընթանում են Վիլնյուսում Արեւելյան գործընկերության «հաջողությունների» շարքից Ուկրաինային հեռացնելու ուղղությամբ:**

**Ու մինչ ողջ միջազգային մամուլն ու նաեւ Արեւելյան գործընկերության տարածաշրջանում փորձում էին մարսել ուկրաինական Ռադայի քայլը, չուշացավ հաստատումն առ այն, որ Վիլնյուսում նոյեմբերի 28-29-ին տեղի ունենալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողովում համաձայնագիր կնախաստորագրեն միայն Վրաստանն ու Մոլդովան: Իսկ Ուկրաինան, ինչպես տեղեկացրին ուկրաինական լրատվամիջոցները աշխատանքային օրվա գրեթե ավարտին, որոշում կայացրեց կասեցնել բանակցությունները ԵՄ-ի հետ:**

**Ըստ այդմ, Ուկրաինայի կառավարությունը Ուկրաինա-Եվրոմիություն Ասոցիացման համաձայնագրի բանակցությունները կասեցնելու որոշում կայացրեց՝ գրեթե բոլոր նախարարություններին հանձնարարելով «քայլեր ձեռնարկել փոփոխություններ մտցնելու պետական նպատակային, ճյուղային եւ տարածաշրջանային ծրագրերում ԱՊՀ երկրների հետ առեւտրի զարգացման, արտադրական համագործակցության ու տեխնոլոգիաների փոխանակման համար՝ պետության տնտեսական կայունության բարձրացման հիման վրա աշխատատեղերի պահպանման ու սոցիալական այլ հարցերի լուծման նպատակով»:**

**Փաստացի ռուսաստանյան կողմից ճնշումների տակ հայտնված ուկրաինական գործարար շրջանակները հասան իրենց նպատակին, քանի որ հենց վերջիններս էին վերը նշված խնդիրների թվարկմամբ թակել Ուկրաինայի նախագահի դուռն ու անգամ արժանացել ընդունելության:**

**Երբ երկու տարի առաջ Ուկրաինան նախաստորագրում էր Եվրոմիության հետ Ասոցիացման համաձայնագիրը, որեւէ մեկի մտքով չէր կարող անցնել, որ ստորագրումը կարող է խնդրահարույց լինել, առավել եւս այդ երկրի եվրոպական կողմնորոշման մասին բարձրաձայնում, հաստատում էին բոլոր եկող ու գնացող ուկրաինական պաշտոնյաները: Ասել է թե շահերն էլ անգամ հավերժ չեն քաղաքականության մեջ. հավերժ են միայն հզորների շահերը, իսկ մյուսների պարագայում «շահ» ասվածը միայն հզորների շահերին հարմարվելու կարողությունն է թերեւս:**


## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական տարածքում Հովհաննես Գրիգորյանի կողմից ձկնաստեսական նպատակով «Կապույս» լճից դուրս եկող ազատ հոսքից 15.0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը**:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2013 թ. նոյեմբերի 28-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն**



## Սրբագրում եւ խմբագրում

**ամեն ծավալի ու բովանդակության**
**հայերեն տեքստերի, գրքերի**
**E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03**



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ռուբինյանց 27/16 | հասարակական տարածք | 2986.63 | 532.39 | 53,300,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայս ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 6-ին ժ.16.00-ին, ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ դեկտեմբերի 6-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 21.11.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: